



ԿԱՆԳՆԵՔ | ՄՏԱԾԵՔ | ՄԻԱՑԵՔ™

Խորհուրդներ ծնողներին համացանցային խաղերի հարցում

Համացանցային խաղերը հաճախ ենթադրում են փոխազդեցություն այլ համակարգիչների և իրական խաղընկերների հետ: Դրական է, երբ երեխաները կարողանում են հաղորդակցվել այլոց հետ, սակայն նրանք նաև պետք է իմանան՝ ինչպես պաշտպանել իրենց, որպեսզի խաղը լինի հաճելի: Չնայած շատ ծնողներ կարող են որոշել արգելել խաղերը, իրականությունն այն է, որ պատանիների մեծ մասն օգտվում է համակարգիչներից և առցանց խաղերից եթե ոչ՝ տանը, ապա ընկերների տներում և հավանաբար նաև դպրոցում: Որպես ծնող կամ խնամակալ՝ կարևոր է հասկանալ ռիսկերը և օգնել երեխային նավարկել խաղերի աշխարհում: Առաջին քայլով **ԿԱՆԳՆԵՔ, ՄՏԱԾԵՔ, ՄԻԱՑԵՔ**:

Մաքուր պահեք համակարգչային սարքավորումը

Խաղային համակարգերը համակարգիչներ են այնպիսի ծրագրերով, որոնք պետք է պարբերաբար թարմացնել (այնպես, ինչպես ձեր անշարժ և շարժական համակարգիչները, հեռախոսները կամ պլանշետները): Անվտանգության կարգավորումներն ավտոմատ են և կանոնավոր կերպով թարմացվում են: Ժամանակ հատկացրեք համոզվելու, որ ձեր տան բոլոր խաղային համակարգերն ունեն ամենավերջին պաշտպանության կարգավորումները:

Արդիականացրեք անվտանգության ծրագրաշարը. Վիրուսներից, վնասակար ծրագրերից և այլ առցանց սպառնալիքներից լավագույն պաշտպանությունը անվտանգության ծրագրաշարը, գննարկիչը և օպերացիոն համակարգն արդիականացնելն է:

Պաշտպանեք բոլոր այն սարքերը, որոնք միանում են Համացանց. Համակարգիչներից բացի վիրուսներից և վնասակար ծրագրերից պաշտպանության կարիք ունեն նաև սմարթֆոնները, խաղային համակարգերը և ցանցին միացող այլ սարքերը:

Պաշտպանեք ձեր երեխայի անձնական բնույթի տեղեկությունները

Զրուցեք ձեր երեխաների հետ այն մասին, թե ինչ ասել է անձնական բնույթի տեղեկություններ: Երեխաները պետք է իմանան, թե ինչ կարող են տարածել և ինչ՝ չեն կարող: Անունները, ծննդյան ամսաթվերը, աշխարհագրական տեղակայումը, կոնտակտային տվյալները և ինքնությունը բացահայտող լուսանկարները անձնական բնույթի տեղեկություններ են: Մինչ հաճելի է մասնակցել խաղերի և ունենալ

խաղընկերների աշխարհի տարբեր մասերից, երեխաները պետք է պահպանեն անանունության այնպիսի մակարդակ, որը թույլ կտա նրանց պաշտպանել իրենց այն անձանցից, ովքեր կարող է և լավագույն մտադրությունները չունենան:

Անվտանգ պահեք ձեր երեխաների հասցեները. Հայցեք պաշտպանություն, որն ավելի ուժեղ է, քան գաղտնաբառերը: Հասցեներ տրամադրող շատ ընկերություններ այժմ առաջարկում են ինքնության ստուգման լրացուցիչ ուղիներ նախքան տվյալ կայքում խաղն սկսելը:

Ընտրեք երկար և ուժեղ գաղտնաբառեր. Օգտվեք մեծատառերի և փոքրատառերի, ինչպես նաև թվերի և խորհրդանիշերի համադրությունից՝ ստեղծելու ավելի անվտանգ գաղտնաբառեր:

Օգնեք երեխաներին լինելու իրենց առցանց ներկայության տերը. Կայքերում նրանց գաղտնիության և անվտանգության կարգավորումները արեք այնպես, որ տեղեկություններ փոխանակելու տեսանկյունից դրանք հարմար լինեն ձեզ: Հիշեցրե՛ք նրանց, որ ճիշտ է սահմանափակելը, թե ում հետ և ինչպես են նրանք տեղեկություններ փոխանակում:

Պարտադրեք, որպեսզի երեխան իր իրական լուսանկարի փոխարեն ավատար տեղադրի:

Անվտանգ կերպով օգտվեք իրական խոսակցություններից կամ մի՛ օգտվեք դրանցից ընդհանրապես. Եթե երեխան խաղում է այնպիսի խաղ, որտեղ պետք է իրականում խոսի, համոզվեք, որ նա փոխում է ձայնը: Եթե խաղում նման բան չի պահանջվում, մի թույլ տվեք, որ նա գրույցների մեջ մտնի խաղընկերների հետ:

Համացանցի հարցում եղեք գիտակ

Տեղյակ եղեք Համացանցի վերջին զարգացումներին, իմացեք, թե ինչպես վարվել, թե ինչ-որ բան այնպես չէ և տեղյակ եղեք, թե ինչ են անում ձեր երեխաներն առցանց:

Թարմացրեք ձեր գիտելիքները: Ուսումնասիրեք համացանցային անվտանգության նոր ուղիները: Ամենա վերջին տեղեկություններին ծանոթացեք վստահելի կայքերից և կիսեք դրանք ձեր երեխաների հետ՝ խրախուսելով նրանց լինել գիտակ Համացանցի հարցում:

Գործելուց առաջ մտածե՛ք. Ուսուցանե՛ք ձեր երեխաներին զգուշանալ այնպիսի հաղորդագրություններից, որոնք նրանց կոչ են անում գործելու անմիջապես, առաջարկում են բաներ, որոնք չափազանց լավն են այդպիսիք լինելու համար կամ հայցում են անձնական բնույթի տեղեկություններ: Նրանք չպետք է անձանոթներից որևէ բան ներբեռնեն: Դրանք կարող են լինել կեղծ ծրագրեր, որոնք իբրև թե նրանց հնարավորություն կտան ավելի լավ խաղալ, սակայն իրականում հնարավոր է, որ դրանք լինեն վնասակար ծրագրեր:

Իմացեք ինչպես արգելափակել և/կամ հաղորդել կիրեռհետապնդողի մասին. Ուշադիր հետևեք այնպիսի խոսակցություններին, որոնց ընթացքում ձեր երեխաներին հետապնդում են և խորհուրդ տվեք նրանց չխաղալ հետապնդողների հետ:

Ընթերցեք և հասկացեք ձեր երեխաների խաղացած խաղերի վարկանիշային գնահատականները. Խաղեր առաջարկող որոշ կայքեր ունեն տարբեր վարկանիշ ունեցող խաղեր: Ստուգե՛ք դրանք:

Մասնակցեք խաղերին ձեր երեխաների հետ միասին:

Եղեք ավելի լավ համացանցային քաղաքացի

Շատ հեշտ է համակարգչի դիմացը նստած ասել բաներ, որոնք երբևէ դեմ առ դեմ չէիք ասի: Հիշեցրեք ձեր երեխաներին առցանց լինել նույնքան հարգալից, որքան կլինեին իրական կյանքում:

- **Ինչն առավել անվտանգ է ինձ համար, անվտանգ է նաև այլոց համար.** Այն, ինչ դուք կամ ձեր երեխաներն անում եք առցանց, կարող է ազդել շատերի վրա տանը, աշխատավայրում և ողջ աշխարհում: Ճիշտ առցանց սովորություններ ունենալուց շահում է համաշխարհային թվային հանրությունը:
- **Հարգալից եղեք այլ խաղընկերների հանդեպ.** Խաղերը պարարտ միջավայր են այնպիսի խոսակցությունների մեջ ներքաշվելու հարցում, որոնք կարող են սադրել այլ խաղընկերներին: Առցանց խաղերը պետք է լինեն առողջ մրցակցության միջավայր:
- **ԿԱՆԳՆԵ՛Ք.** Նախքան Համացանցից օգտվելը ժամանակ հատկացրեք ուսումնասիրելու ռիսկերը և սովորելու, թե ինչպես բացահայտել հավանական խնդիրները:
- **ՄՏԱԾԵ՛Ք.** Մի պահ ժամանակ հատկացրեք համոզվելու, որ ճանապարհը հարթ է: Աչալուրջ եղեք նախազգուշացումների հարցում և մտածեք, թե ինչպես կարող են ձեր առցանց գործողություններն ազդել ձեր և ձեր ընտանիքի անվտանգության վրա:
- **ՄԻԱՅՆԵ՛Ք.** Վայելեք Համացանցն ավելի մեծ վստահությամբ՝ համոզված, որ ձեռնարկել եք ճիշտ քայլեր ապահովագրելու ձեզ և ձեր համակարգիչը:

Լրացուցիչ ռեսուրսներ՝

Sony Playstation Knowledge Center: <http://us.playstation.com/support/parents/index.htm>

Microsoft XBOX – GetGameSmart: www.getgamesmart.com

National Center for Missing and Exploited Children – NetSmartz: <http://www.netsmartz.org/Gaming>